1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 **«Միդիա-Շանգալ» եզդիների ազգային միավորում» հասարակական կազմակերպությունը** /այսուհետ՝ կազմակերպություն/ անձանց շահերի ընդհանրության հիման վրա, ոչ կրոնական հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքներ բավարարելու նպատակով ստեղծված կամավոր հասարակական միավորում է:

1.2Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:

1.4Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5Կազմակերպության հայերեն լրիվ անվանումն է՝ «Միդիա-Շանգալ» եզդիների ազգային միավորում» հասարակական կազմակերպություն:

1.6 Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Ք.Երևան, Դ.Անհաղթի 23:

2.ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ (ԱՌԱՐԿԱՆ) ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1Կազմակերպության գործունեության նպատակներն /առարկան/ ու խնդիրներն են՝ օրենքով սահմանված կարգով՝

- կազմակերպել այցելություններ Իրաքում և Թուրքիայում գտնվող եզդիների սրբավայրեր.
- համագործակցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ ՝ օրենսդիր և տեղական ինքնակառավարման մարմիններում եզդի ժողովրդի ներկայացուցչի ընտրության համար.
- իրականացնել աշխատանքներ, որոնք ուղղված կլինեն եզդի ժողովրդին, Հայաստանում գրանցված և գործող բոլոր եզդիական ոչ առևտրային կազմակերպությունները մեկ կենտրոնի շուրջ համախմբելու ուղղությամբ.
- ձեռնարկել ուսումնասիրություններ եզդի ժողովրդի պատմության հարցերը վեր հանելու և դրանց ճիշտ լուծումը ապահովելու համար.
- կապեր հաստատել արտերկրում գործող կազմակերպությունների՝ մասնավորապես Իրաքի «Լալիշ» կազմակերպության հետ.
- համագործակցել Արևմտյան Եվրոպայի «Եզդիների ազգային կենտրոն» կազմակերպության հետ.
- աջակցել ազգային փոքրամասնությունների մասին ՀՀ օրենքների նախագծերի քննարկման և առաջարկությունների կատարման աշխատանքներին.
- գլոբալ հիմնախնդիրներում համագործակցել արտերկրում գործող հայկական և եզդիական ոչ առևտրային կազմակերպությունների հետ.
- վերջ տալ ՀՀ-ում և արտերկրում եզդի և քուրդ երկու ժողովուրդների էթնիկական պատկանելության վերաբերյալ վեճերին.
- համագործակցել ՀՀ պաշտպանության նախարարության հետ ծրագրեր իրականացնող «համակարգող խորհուրդ» իրավաբանական անձանց միության հետ, սահմանված կարգով մասնակցել միության աշխատանքներին և ունենալ իր ներկայացուցիչը միության, ինչպես նաև ՀՀ նախագահին առընթեր հանրային խորհրդի կազմում, համագործակցել մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ, ունենալ իր ներկայացուցիչը քաղաքացիական ծառայության խորհրդում.
- բիզնես ծրագրերի իրականացում.
- աջակցել կրթության ոլորտում ուսանողների խնդիրների լուծմանը
- որպես կառուցվածքային ստորաբաժանում կազմակերպության կազմում ստեղծել «երիտասարդական կենտրոն»
- աջակցել եզդի ժողովրդի հոգևոր-մշակութային զարգացմանը.